

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**20 հոկտեմբերի 2023թ.
ք. Երևան**

N 70-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՄԱՍՆԱԿՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ, ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ (ՄԱՆԴԱՏԻՑ
ՀՐԱԺԱՐՎԱԾ) ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 141-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն. «Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված անձանց կողմից ներկայացված ինքնաբացարկի կամ մանդատից հրաժարվելու դիմումները վավերացվում են նոտարական կարգով, կամ համապատասխան դիմումը անձը հաստատում է ընտրական հանձնաժողովի նիստում: Նոտարական կարգով վավերացված՝ ինքնաբացարկի կամ մանդատից հրաժարվելու մասին դիմումը սույն հոդվածի իմաստով համարվում է վավեր, եթե այն ընտրական հանձնաժողով է ներկայացվում վավերացվելուց հետո՝ առավելագույնը եռօրյա ժամկետում:

Ինքնաբացարկի մասին դիմում ներկայացնելու դեպքում քաղաքացու անունը, ազգանունը հանվում են ընտրական ցուցակից՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:»:

2023 թվականի սեպտեմբերի 17-ին կայացած Երևանի ավագանու ընտրությունների մասնակցած Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածուներ՝ Անդրանիկ Գազիկի Գասպարյանը, Արտակ Գրիգորի Հովակիմյանը, Սամվել Էդուարդի Ղուկասյանը, Վահե Մանվելի Հակոբյանը, Միքայել Ռաֆայելի Օհանյանը, Արմեն Պետրոսի Միերյանը, Լուսինե Վիկտորի Դայանը, Ռազմիկ Սամվելի Մկրտչյանը ներկայացրել են ինքնաբացարկի դիմումներ՝ վավերացված նոտարական կարգով: Նույն ընտրական ցուցակից ինքնաբացարկի դիմում է ներկայացրել նաև Ռոման Վարազդատի Համբարձումյանը, որի դիմումը վավերացված չէ նոտարական կարգով: Ռոման Վարազդատի Համբարձումյանը ներկայացել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 20.10.2023թ. ժամը 15:00-ի նիստին և հաստատել իր կողմից ներկայացված ինքնաբացարկի դիմումը:

Ընտրական օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն ընտրական հանձնաժողովի որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվում, եթե նա ներկայացրել է դիմում ինքնաբացարկի մասին:

Ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչվելու դեպքում թեկնածուի անունը հանվում է ցուցակից՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Ուժը կորցրած ճանաչել Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածուներ՝ Անդրանիկ Գազիկի Գասպարյանի, Արտակ Գրիգորի Հովակիմյանի, Սամվել Էդուարդի Ղուկասյանի, Վահե Մանվելի Հակոբյանի, Միքայել Ռաֆայելի Օհանյանի, Արմեն Պետրոսի Մեերյանի, Լուսինե Վիկտորի Դայանի, Ռազմիկ Սամվելի Մկրտչյանի, Ռոման Վարազդատի Համբարձումյանի գրանցումները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Վ. Հովակիմյան